

5.8. Ստանդարտացումը, սերտիֆիկացումը և հավատարմագրումը 2015 թվականի IV եռամսյակում և հունվար-դեկտեմբերին

5.8.1. Ստանդարտացում, սերտիֆիկացում և հավատարմագրում: Ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարության ամփոփ տեղեկատվության, 2015թ. IV եռամսյակում և հունվար-դեկտեմբերին ստանդարտացման, սերտիֆիկացման, հավատարմագրման և նորմատիվ փաստաթղթերի պարտադիր պահանջների պահպանման պետական վերահսկողության ոլորտներում իրականացված գործունեությունը բնութագրվել է հետևյալ ցուցանիշներով.

Ստանդարտացման, սերտիֆիկացման և հավատարմագրման գործունեության հիմնական ցուցանիշները

	IV եռամսյակ	Հունվար-դեկտեմբեր
<i>միավոր</i>		
Ստանդարտացում		
Ընդունված և պետական գրանցում ստացած ազգային ստանդարտների քանակը	529	1 341
այդ թվում՝		
ՀՀ ստանդարտներ	24	26
Միջպետական ստանդարտներ	356	925
միջազգային և եվրոպական ստանդարտներ	149	390
Թողարկված տեղեկատվական նյութերի քանակը	3	14
Սերտիֆիկացում		
Տրված համապատասխանության սերտիֆիկատների քանակը	447	1 830
որից՝		
ներմուծվող արտադրանքի համար	275	1 169
արտահանվող արտադրանքի համար	24	89
Արտադրանքի սերտիֆիկացման մերժված հայտերի քանակը	6	34
որից՝		
արտադրանքի անհամապատասխանության պատճառով	6	32
Հավատարմագրում		
ՀՀ տարածքում հավատարմագրված սերտիֆիկացման մարմինների քանակը	2	6
ՀՀ տարածքում հավատարմագրված լաբորատորիաների քանակը	7	15

5.8.2. Անորակության պատճառով չսերտիֆիկացված արտադրանք: 2015թ. IV եռամսյակում և հունվար-դեկտեմբերին անորակության պատճառով չեն սերտիֆիկացվել ներմուծված և ՀՀ-ում արտադրված արտադրանքի մի շարք տեսակներ:

Անորակության պատճառով չսերտիֆիկացված արտադրանքն ըստ երկրների

Երկիրը	Արտադրանքի անվանումը	Քանակը	
		IV եռամսյակ	հունվար-դեկտեմբեր
Իրանի Իսլամական Հանրապետություն	Ավտոմոբիլային դիզելային վառելիք ամառային	1 764 506 կգ	7 909 197 կգ
	Ավտոմոբիլային դիզելային վառելիք ձմեռային 0 դասի	274 110 կգ	995 710 կգ
Հայաստանի Հանրապետություն	Պտուղրանջարեղենային պահածոներ	-	սերիական թողարկում
	Պահածո, մսաբուսական պահածո	-	սերիական թողարկում